

**ԲԱՑԱՌԻԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ
ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ**

Կ Ո Ղ Մ Է

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք այստեղ մեր նուիրատուութիւն մը Գալուս Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ կատարուած՝ ի նպաստ Պատրիարքարանիս։

Անցեալ տարուան Նոյեմբերին, Վանքի խոհանոցի եւ սեղանասան քաժնիկ ջակ՝ Կամարակապ հին մատանին յանկարծական փրուզումով, վնասուած էր ամբողջ քաղաքում մը եւ երեք յարկեր փրած էին։

Ընդառաջելով Պատրիարքարանիս պիւնումին, Գալուս Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը յանձն առաւ նախնական վերանորոգումի ծախար։

Այժմ կատարուած են արդէն յիշեալ վերանորոգումները, որոնց համար Աթոռիս բարերար հիմնարկութիւնը կը տրամադրէ 1608 սփերին։

Պատրիարքարանիս երախագիտութեամբ կը յիշատակէ սոյն նուիրատուութիւնը եւ կը գովէ Գալուս Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախանձախնդրութիւնը՝ Յակոբեանց դարաւոր Վանքի պահպանման եւ պայծառութեան համար։

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՒՈՅ

Ազգի մը մեծութիւնն ու արժանիքը կը չափուի որքան իր մեակոյթով, իր ուրոյն գրականութեամբն ու արուեստովը, նոյնքան եւ իր բարոյական ուժերով, իր բարեգործութեան կոթողներով, իր բարերար եւ մարդասէր անձնաւորութիւններով։

Մենք, իբեւ ազգ, մեծ եղած ենք ո՛չ միայն մեր հոգիի ու գրչի հսկաներով, մեր իւրայատուկ փառափառութեամբ ու մեակոյթով, այլ որովհետեւ կրցած ենք ծնունդ ձալ ճաշել Սանասարեաններու, Պօղոս Նուկարներու, Կիւլպէնկեաններու, Գարակեօզեաններու եւ Մելիգեաններու նման մեծանուն Բարերարներու՝ որոնց սիրք իրենց զանգեւ աւելի՛ բարձր մնացած է միշտ ...:

Հերոսները միայն պատերազմի դաշին վրայ, իրենց փառքեամբն ու անձնութեամբը պանծացողները չեն։ Հերոս են ճաշել անոնք՝ որոնք աւելի, առանց փոխարինութեան սպասելու, երբեմն իրենց բոլոր ինչն ու ստացուածքը։ Այս ճշտակեցով, մեր անմահ Բարերարները արժանի են ամէն գնահատանքի եւ երախագիտութեան։